Կարգապահական գործ թիվ ԿԳ-18088

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2018 թվականի հուլիսի 7-ի թիվ 169-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/127-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՍԱՐԳԻՍ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՎ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, **նիստը նախագահող՝** Տիգրան Խուրշուդյանի, Խորհրդի անդամներ՝ Կարեն Մեժլումյանի, Կարապետ Աղաջանյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Սարդարյանի, Արայիկ Ղազարյնաի կազմով,

քարտուղարությամբ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Սարգիս Թորոսյանին (արտոնագիր՝ թիվ 1029) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. <u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը</u>.

«Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի (**այսուհետ նաև՝ Դպրոց**) կողմից 16.03.2018թ. ներկայացված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Սարգիս Թորոսյանը (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) 2017թ-ի երկրորդ կիսամյակի (հուլիսից դեկտեմբեր (ներառյալ)) ընթացքում չի մասնակցել պարտադիր վերապատրաստման դասընթացներին և չի լրացրել պարտադիր վերապատրաստման որևէ ժամ:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը</u>.

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալի 19.03.2018թ. թիվ 158-Ա/ԿԳ-18088 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել փաստաբան Սարգիս Թորոսյանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (**այսուհետ նաև՝ Օրենք**) 19-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետի, 45.12-րդ հոդվածի 2-րդ մասի և Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև՝ Կանոնագիրք**) 2.8.2 ենթակետի խախտման հատկանիշներով:

22.03.2018թ. կարգապահական գործը հանձնվել է Պալատի խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2018 թվականի հուլիսի 7-ին, ժամը՝ 13:04-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

3. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունը.</u>

Պատասխանողը բացատրություն չի ներկայացրել: Պատասխանողը, թեև պատշաճ ծանուցվել է կարգապահական նիստի վայրի և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել:

4. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի խորհուրդը՝ ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. **06.04.2018 թվականին փաստաբան Սարգիս Թորոսյանը դիմել է փաստաբանների պալատ՝ խնդրելով կասեցնել իր փաստաբանական գործունեության թիվ 1029 արտոնագրի գործողությունը:**

   Նշված փաստը հաստատվում է Սարգիս Թորոսյանի 06.04.2018 թվականի դիմումով:

2. **Պալատի խարհրդի նախագահը իր՝ 03.05.2018թ. թիվ 9/6-Ա որոշմամբ փաստաբան Սարգիս Թորոսյանի դիմումը բավարարել է:**

   Նշված փաստը հաստատվում է Պալատի Խորհրդի 03.05.2018թ. թիվ 9/6-Ա որոշմամբ:

5. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Սարգիս Թորոսյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ *փաստաբանների պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ կարգապահական խախտումը կատարելուց հետո սույն օրենքով սահմանված կարգով փաստաբանի արտոնագրի գործողությունը դադարեցվել է*:

Տվյալ դեպքում Պատասխանողի արտոնագրի գործողությունը կասեցվել է Պալատի խորհրդի նախագահի՝ 03.05.2018թ. թիվ 9/6-Ա որոշմամբ:

Նշվածը հաշվի առնելով, Խորհուրդը գտնում է, որ առկա է Օրենքի 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված կարգապահական գործի վարույթը կարճելու հիմքը:

Վերը նշվածից ելնելով՝ Պալատի խորհուրդը չի անդրադառնում Սարգիս Թորոսյանի կողմից պարտադիր վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու վարքագիծը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 28-րդ 1-ին մասի 4-րդ կետի պահանջներով, Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Սարգիս Թորոսյանի նկատմամբ 19.03.2018թ. թիվ 158-Ա/ԿԳ-18088

որոշմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել՝ կարգապահական խախտումը կատարելուց հետո սույն օրենքով սահմանված կարգով փաստաբանի արտոնագրի գործողությունը կասեցվելու հիմքով:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել Սարգիս Թորոսյանին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Տիգրան Խուրշուդյան

07 հուլիս 2018թ.
թիվ ԿԳ/127-Ա
ք. Երևան